«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր։

Կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Շ.Սաղաթելյան

Առարկա՝՝մաթեմատիկա

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն ----------3

Գլուխ 1. Բնապահպանական հիմնախնդրի էությունը --

1.1 Բնապահպմանական հիմնախնդիրը որպես մարդկությանը սպառնացող մարտահրավեր ----------

1.2 Բնապհապանական հիմնախնդրի լուծման մոտեցումները։ Կայուն զարգացում----------

Գլուխ 2. Բնապահպանական գիտելիքների փոխանցումը դպրոցում ----------

2.1 Բնապահպանական կրթություն ----------

2.2 Բնապահպանական դաստիարակություն ----------

Եզրակացություն----------

Գրականության ցանկ----------

Ներածություն

20-րդ դարի երկրորդ կեսը ոչ միայն նշանավորվեց մարդկության գիտական և մշակութային աննախադեպ բարձր նվաճումներով, այլև մարդու առջև ծառացած նոր իրողություններով: Վերջիններիս համատեքստում առաջնային պլան դուրս եկավ բնապահպանական հիմնախնդիրը, որն ըստ էության, հրամայական ձևակերպեց վերահաստավորել մարդկության կենսակերպը: Այդ ամենը թելադրված էր ռեսուրսների սխալ շահագործման, բնության վերաբերյալ սակավ գիտելիքների, տիրող էկոլոգիական իրավիճակի գնահատման պահանջով:

Այստեղ առանցքային դարձավ հասարակության էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը:

Էկոլոգիական կրթությունը կայունությունը հանավոր է ապահովել միայն հանրակարթական դպրոցում բոլոր առարկաների ինտեգրված, համալի ջանքերի շնորհիվ:

Վերոնշյալ գործոններն էլ ընդգծում են սույն հետազոտական աշխատանքի ինչպես արդիականությունը, այնպես էլ բուն նպատակը՝ բացահայտել բնապահապանական հիմնախնդրի ուսուցման բովանդակությունը՝ կրթական և դաստիարակչական խնդիրները:

Հետազոտական աշխատանքի նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- *ներկայացնել բնապահպանական կրթության էությունը,*
- *ներկայացնել բնապահպանական կրթության ժամանակակից բովանդակությունը և բնապահպանական մշակույթի էությունը,*
- *նկարագրել բնապահպանական կրթությունը հանրակթական դպրոցի տարբեր օղակի դասընթացներում,*
- *էկոլոգիական կրթությունը միջին դպրոցի ախարագրության դասընթացներում,*

- *էկոլոգիական կրթությունը ավագ դպրոցի աշխարհագրության դասընթացներում:*

Հետազոտական խնդիրների լուծման տրաբանություն էլ պայմանավորել է աշխատանքի կառուցվածքը: Ըստ այդմ, այն բաղկացած է ներածությունից երկու բաժիններից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԲԱԺԻՆ 1

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Բնապահպանական հիմնախնդիրը որպես մարդկությանը սպառնացող մարտահրավեր

Ժամանակակից աշխարհում համամոլորակային հիմնախնդիրների առաջացման համար կան օբյեկտիվ նախադրյալներ: Դրանք այն հիմնախնդիրներն են, որոնք առնչվում են ամբողջ մարդկության կենսական շահերին: Պատահական չէ, որ արդի դարաշրջանի համար հաճախ օգտագործվում է «համամոլորակային հիմնախնդիրների դարաշրջան արտահայտությունը:

Մասնագիտական գրականության մեջ և ընդհանրապես հասարակական ընկալման համար համամոլորակային են համարվում այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ամբողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում նրանց ներկային ու ապագային, և դրանց լուծման համար պահանջվում է բոլոր ժողովուրդների ու գործողությունների միասնությունը:

Իրենց բնույթով համամոլորակային հիմնախնդիրները տարբեր են, սակայն բոլորը համակված են մարդկության աշխարհագրական միասնության և կենսակայունության գաղափարով:

Համամոլորակային հիմնախնդիրները ըստ իրենց բնույթի կարելի խմբավորել հետևյալ հարթություններում՝

- ***Հիմնախնդիրներ, որոնք առաջացել են մարդ-բնություն փոխահարաբերությունների հարթությունում,***
- ***Հիմնախնդիրներ, որոնք առաջացել են մարդ-հասարակություն փոխարաբերությունների հարթությունում***
- ***Հիմնախնդիրներ, որոնք առաջացել են քաղաքակրթությունների փոխհարաբերությունների հարթությունում***

Մասնագիտական գրականության մեջ համամոլորակային կոնկրետ հիմնախնդիրների առանձնացման համար առկա են տարբեր մոտեցումներ:

Ընդհանրացնելով կարծիքների բազմազանությունը, կարելի մատնանշել հրատապ լուծում պահանջող հետևյալ խնդիրները՝

- *Խաղաղության պահպանության հիմնախնդիրը,*
- *բնապահպանական հիմնախնդիրը՝ կապված բնական միջավայրի խախտման հետ,*
- *զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը,*
- *թույլ զարգացած երկրներում հարյուր միլիոնավոր մարդկանց մշտական թերսնման և սովի հետ կապված պարենային հիմնախնդիրը,*
- *մորոլակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը,*
- *նախկին գաղութների (զարգացող երկրների) հետամնացության հաղթահարման հիմնախնդիրը, որը, ցավոք, ոչ միայն չի վերանում, այլև երկրագնդի որոշ տարածաշրջաններում դրսևորվում է առավել ցայտուն,*
- *համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը՝ առաջին հերթին կապված նրա կենսաբանական արդյունավետության և աղտոտման հետ,*
- *տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը,*
- *կլիմայի փոփոխության հիմնախնդիրը*։

Բացի հիմնականներից, կան նաև մի շարք մասնավոր հիմնախնդիրներ, որոնք ևս շատ կարևոր են (օրինակ՝ հանցագործությունների թմրամոլությամբ ժողովրդավարության պակասի, տեխնածին աղետների, բնական աղետների և այլն)։ Վերջին տասնամյակներս առավել արդիական է դարձել միջազգային ահաբեկչության հիմնախնդիրը։

Նախկին հիմնախնդիրների սրությունը և ծավալները չեն կարող համեմատվել վերջին մի քանի տասնամյակներին տեղի ունեցող գործընթացների ու երևույթների հետ։ Համընդհանուր հիմնախնդիրները ծնվում են տեղային, ազգային

հիմնախնդիրներից, սակայն դրանց լուծման համար պահանջվում են ոչ թե առանձին, այլ համաշխարհային հասարակության միասնական գործունեությունը։

Մեր մոլորակը իր պատմության ընթացքում երբևէ չի բախվել այնպիսի հիմնախնդիրների, որոնք կան մեր օրերում։ Արդեն գոյություն ունեն մարդկության բնակության տարածքի բիապահպանական հատկությունների անվերադարձ փոփոխության, ձևավորվող համաշխարհային հասարակայնության միասնականության խախտման և քաղաքակրթության ինքնառչնչացման սպառնալիքները։

Համամոլորակային հիմնախնդիրների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել արտադրողական ուժերի զարգացման ընդհանուր օրինաչափություններն ու միտումները (այդ թվում՝ ԳՏՀ ազդեցությունը), սոցիալական գործոնների դերը (մոլորակի բնակչության արագ աճը, պետությունների փոխազդեցության մեծացումը)։

Մարդկային գործունեության բոլոր ոլորտներում տեղի է ունեցել որակական մեծ թռիչք։ Տնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում խոշորամաշտաբ տնտեսական գործունեությունը և դրա դինամիզմն իրենց հետ բերում են ոչ միայն դրական, այլև բացասական հետևանքներ, այդ թվում՝

- *բնական ռեսուրսների կտրուկ և ոչ միշտ արդարացված սպառումը,*
- *արտադրական գործունեության բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և մարդկանց կյանքի էկոլոգիական պայմանների վատթարացումը,*
- *արդյունաբերական զարգացած և զարգացող երկրների միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհամաչափության մեծացումը,*
- *զանգվածային ոչնչացման զենքի ստեղծումը, որը սպառնում է մարդկային քաղաքակրթությանը։*

Բոլոր գործոնները այս կամ այն չափով նպաստել են համամոլորակային հիմնախնդիրների առաջացմանը և սրմանը։

1. 2 Բնապհապանական հիմնախնդրի լուծման մոտեցումները: Կայուն զարգացում

Այսպիսով, մարդկության զարգացման ներկա հանգրվանում ակնհայտ է դարձել համաշխարհային հասարակության զարգացման ռազմավարության և տրամաբանության վերարժեվորումը: Որպես այդպիսի մոդել կարող ենք նշել՝ Կայուն զարգացման հայեցակարգը:

Կայուն զարգացումը – դա զարգացում է, որը երաշխավորում է ներկա և ապագա սերունդներին պատշաճ, առավելագունս հնարավոր մեկնարկային հավասար պայմաններ՝ իրենց ընդունակությունները դրսևորելու և կենսական պահանջները բավարարելու համար: Կայուն զարգացումը հիմնվում է այնպիսի տնտեսության վրա, որը մարդու իրավունքները պաշտպանող ժողովրդագրական հասարակության մեջ զուգորդվում է էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ:

Այս սահմանումը «զարգացման մեկնարկային պայմաններ», «էկոլոգիական անվտանգություն» և «մարդու իրավունքներ» հասկացությունների տարողունակ լինելու շնորհիվ իր մեջ ընդգրկում է ինչպես կենսաբանական, լանդշաֆտային բազմազանության պահպանության սկզբունքները, այնպես էլ ազգային բազմազանության պահպանության սկզբունքները:

Ավելի հակիրճ *Կայուն զարգացումը կարելի բնութագրել որպես տնտեսական, սոցիալական և էկոլոգիական գերակայությունների միջև կոնսեսու կամ փոխզիջում ապահովելու ձգտում:*

Պետք է նկատել, որ կայունության հունով զարգացումը հնարավոր չէ վայրկեանական իրականացնել, դա բազմափուլ գործընթաց է (սխեմա 2):

Սկզբում անհրաժեշտ է ճգնաժամից դուրս գալ, հատկապես հոգեբանական ճգնաժամից, այնուհետև աստիճանաբար մոտենալ 1, 2, 3 սիգմենտներին, որը իվերջո մեզ կմոտեցնի 4-րդ նպատակային սիգմենտին: Այս գործընթացը դինամիկ է և կարիք ունի անընդհատ ճշգրտման՝ տեղային, ազգային և գլոբալ մակարդակներում:

Քանի, որ «Կայունություն» ինչ-որ չափով նշանակում է նաև «պահպանել», հետևաբար բնապահպանական ոլորտում առանձնացնում են թույլ և ուժեղ կայունություն հասկացությունները, որոնց քննարկման համար որպես մոտավոր համարժեք ընկալվում է բնական կապիտալի ծավալը: Այսպես կոչված «թույլ կայունությունը» թույլատրում է այդ կապիտալի նվազումը մարդու կողմից ստեղծված համապատասխան ակտիվների ընդլայնման պայմաններում: Դրան հակառակ «ուժեղ կայունությունը» ենթադրում է բնական բարիքների անհրաժեշտ մակարդակի պահպանումը, քանի որ այնպիսի բնական ռեսուրսներ՝ ինչպիսիք են օդը, ջուրը, հողը և այլն հնարավոր չէ փոխարինել անդրոպոգեն այլընտրանքային ակտիվներով: Այսինքն պետք է համաձայնվել դրանցից յուրաքնչյուրի քանակի և որակի պահպանության անհրաժեշտության հետ:

Եզրափակելով կարող ենք ասել, որ Կայուն զարգացման 2 չափանիշներն էլ էկոլոգիական ռազմավարության ժամանակ պետք է հաշվի առնել:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ



ԲԱԺԻՆ 2

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1 Բնապահպանական կրթություն

Բնական միջավայրի կայուն զարգացումը և ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը ապահովելու համար կարևոր բաղադրիչ է բնակչության բոլոր խմբերի իրազեկվածության մակարդակի բարձրացումը, ինչը ձեռք է բերվում էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցով, որն ի վերջո ձևավորում է հասարակության էկոլոգիական մշակույթը: Բնապահպանական և էթիկական նորմերի, արժեքների, մասնագիտական հմտությունների յուրացումն իրականացվում է անհատի էկոլոգիական կրթության և էկոլոգիական գրագիտությանը նպատակաուղղված հիմքի միջոցով, ինչը կնպաստի բնության նկատմամբ հոգատար, ոչ սպառողական և նվազագույն չափով վնասելու վերաբերմունք ունեցող հասարակության ձևավորմանը:

Էկոլոգիական կրթությունը անհատի և բնակչության կրթության, դաստիարակության, զարգացման, ինքնակրթության և փորձի կուտակման գործընթաց է, որն ուղղված է արժեքային կողմնորոշումների, վարքագծի նորմերի և շրջակա միջավայրի պահպանության, բնության կառավարման և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման մասին հատուկ գիտելիքների ձևավորմանը: Իրականացված էկոլոգիապես իրավասու գործունեության մեջ Էկոլոգիական կրթությունը ոչ միայն գիտական գիտելիքներ է տալիս էկոլոգիայի բնագավառում, այլև ապագա մասնագետների էկոլոգիական կրթության կարևոր օղակ է: Սա ենթադրում է նրանց մեջ սերմանել բարձր էկոլոգիական մշակույթ, բնական ռեսուրսների մասին հոգալու կարողություն և այլն: Այսինքն՝ մասնագետները պետք է ձևավորեն էկոլոգիական նոր գիտակցություն և մտածողություն, որի էությունն է՝ մարդը բնության մի մասն է, իսկ բնության պահպանումը մարդու լիարժեք կյանքի պահպանումն է:

Էկոլոգիական կրթությունը ողջ կրթական համակարգի կարևոր և առաջնահերթ մասն է: Դրան տալով նոր որակ, ձևավորելով այլ վերաբերմունք ոչ միայն բնության, այլև հասարակության, մարդու նկատմամբ (էկոհումանիզմ): Էկոլոգիական կրթությունը նշանակում է նոր աշխարհայացքի և գործունեության նոր մոտեցման ձևավորում՝ հիմնված նոոսֆերա-մարդասիրական և բնապահպանական արժեքների ձևավորման վրա:

Էկոլոգիական կրթությունը ճգնաժամից դուրս գալու միջոց է. ճգնաժամից դուրս գալու համար անհրաժեշտ են նպատակաուղղված ջանքեր և հաղթահարել տգիտությունը, անկարողությունը, թուլությունը, անմիաբանությունը: Ընդհանուր ապագայի պատկերը ստեղծվում է, երբ մարդկանց հիմնական շահերը համընկնում են: Որքան լայն ու կոնկրետ լինեն շահերը, որքան խորը ընկալվի սեփական խնդիրները որպես ընդհանուր, այնքան ուժեղ կլինի միավորումը ապագայի պատկերով: Բնապահպանական կրթության խնդիրն է օգնել զարգացնել էկոհամակարգային մտածողությունը, աշխարհայացքը և պատրաստել մարդկանց ճգնաժամը հաղթահարելու համատեղ գործողությունների: Բնության պահպանության շարժման մասնակիցների խնդիրն է միասին աշխատել՝ նվազեցնելու գալիք ճգնաժամի հետևանքների ռիսկն ու ծանրությունը:

Այժմ էկոլոգիական կրթությունը դառնում է պարտադիր բաղադրիչ կրթական ուսուցման ընդհանուր բազայում: Բնապահպանական գիտելիքների զարգացումը արագ է ընթանում, ուստի ավելի վաղ ստացված գաղափարները արագորեն հնանում են: Պահանջվում է կանոնավոր վերապատրաստում այս ոլորտում և ուսումնական նյութի արդիականացում:

Էկոլոգիական ճգնաժամի սրումը XXI դարում մի շարք խնդիրներ է առաջացրել համաշխարհային հանրության համար, այդ թվում՝ կրթական: Ռիո դե Ժանեյրոյում կայացած համաժողովում հռչակվել է կայուն զարգացման սկզբունքը («Կայուն զարգացում»): Ըստ ակադեմիկոս Ն.Ն. Մոիսեևի, չնայած «Կայուն զարգացում» հասկացության որոշակի հայեցակարգային երկիմաստությանը և դրա պարզեցմանը,

որն անընդունելի է, զարգացման ներկա փուլում շեշտը պետք է դնել ընդհանրապես բնապահպանական կրթության հիմնական նպատակների և խնդիրների ձևակերպման վրա՝ մասնավորապես գիտական կադրերի ձևավորման խնդրի վրա։

Մարդու և բոլոր կենդանի օրգանիզմների գոյատևման էկոլոգիական պայմաններից ամենակարևորը Երկրի վրա խաղաղ կյանքի ապահովումն է։ Ահա թե ինչին է ձգտում և ձգտելու է էկոլոգիական կրթություն ստացած մարդը։

Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակին հասնելու համար չպետք է սահմանափակվել միայն էկոլոգիական հասկացությունների համակարգի ուսուցմամբ։ Էկոլոգիական գիտելիքները դաստիարակչական արժեք են ձեռք բերում միայն այն ժամանակ, երբ դրանք դառնում են անձնային արժեքներ, և կապված կոնկրետ խնդիրների հետ, աշակերտները հայտնվում են այնպիսի իրավիճակում, որում արտահայտվում է մարդկանց վերաբերմունքը խնդրի լուծման որոնողական ընթացքի նկատմամբ, այսինքն ստացած տեսական գիտլիքներ, պետք է հասցնել այնպիսի մակարդակի, որ աշակերտները գործնականում դրանք կիրառեն։

Էկոլոգիական կարողություններն ու հմտությունները զարգացնելու համար կարելի է կիրառել տարբեր միջոցներ, օրինակ պրոբլեմային զրույց, նյութի պրոբլեմային հնարներով շարադրումը, նպատակային դերային խաղեր, սուր էկոլոգիական իրավիճակների ցուցադրումն ու վերլուծությունը, բնապահպանական գործնական աշխատանքներ (օրինակ շաբաթօրյակներտ, ցուցանակների պատրաստում)։ Իրենց գործողություններով կարգավորելով շրջակա միջավայրը՝ դպրոցականները մարդկանց վարքի և վատ վնասաբեր արարաքների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք են դրսևորում։ Ժամանակի ընթացքում դա կունենում է իր դրական ազդեղություն շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի վրա։

2 Բնապահպանական դաստիարակություն

Ժամանակակից դպրոցի խնդիրներից է անձի էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Էկոլոգիական մշակույթն իր դրսևորումն է գտնում արտադրական և կենցաղային բոլոր ոլորտներում, այն կոչված է ապահովելու բնական միջավայրի պահպանումն ու բարելավումը:

Էկոլոգիական մշակույթը բնության նկատմամբ սովորողի գիտակցված վերաբերմունքն է, որն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունն ու զարգացումը, նպաստում է բարենպաստ պայմանների ստեղծմանը մարդու կյանքի գործունեության համար: Էկոլոգիական մշակույթի կարևոր բաղադրամաս են համարվում՝ 1. գիտելիքները մարդ-բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ, 2. այդ փոխհարաբերությունները օբյեկտիվ գնահատելու կարողությունը, 3.համոզմունքը բնության ռացիոնալ օգտագործման և բնապահպանման անհրաժեշտության վերաբերյալ: Սովորողների էկոլոգիական մշակույթի մակարդակը կախված է էկոլոգիական կրթության որակից, որը պարզաբանում է մարդու տեղն ու դերը բնության մեջ:

Էկոլոգիական մշակույթի ձևավորման խնդրի լուծումը պայմանավորված է էկոլոգիական կրթության և դասիարակության բովանդակության և մեթոդների ճիշտ ընտրությամբ ու իրականացմամբ:[1]

Աճող սերնդի բարձրակարգ էկոլոգիական մշակույթի դաստիարակումը թույլ կտա հասարակական կյանքում մի ամբողջ շարք բացասական երևույթներ հաղթահարել, կնպաստի մարդկանց միջև հարաբերությունների ներդաշնակությանը, ինչպես միմյանց, այնպես էլ բնության և ինքն իր հետ՝ որպես բնության մի մասնիկ: Էկոլոգիական մշակույթին տիրապետող մարդու գիտակցությունը, զգացմունքները և

[1] Ասատրյան Լ. Թ. «Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները», «Արտագերս» Երևան 2006 թ, 334 էջ:

վարքը ներդաշնակության մեջ են գտնվում, իսկ նրա վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ մարդասիրական:

Ժամանակակից գիտական գրականության մեջ «մշակույթ» հասկացությունը համարում են մարդու գոյության, նրա կենսագործունեության միջոց: Մշակույթը պետք է ընկալվի, որպես մարդու առանձնահատուկ կենցաղի միջոց, որը պետք է բնորոշի նրա գործունային և հոգևոր ակտիվության ամբողջ տեսանկյունը, նրա հավանական վերաբեմունքը շրջապատող աշխարհի և ինքն իր նկատմամբ: Այդ դեպքում էկոլոգիական մշակույթը կդառնա մարդու գոյության միջոց, նրա կենցաղի, բնության նկատմամբ վերաբերմունքի չափանիշ:

Մշակույթի կառուցվածքը ներկայացված է երեք ենթահամակարգերով՝ բնաէկոլոգիական մշակույթ (հասարկության հարմարումը կենսաֆիզիկական շրջապատին), հասարակական-էկոլոգիական մշակույթ (միջավայրի հետ հասարակության կարգավորված փոխգործակցությունը, այդ թվում նաև սոցիալական), սոցիալ-կարգավորիչ մշակույթ (սոցիալական համակարգի պահպանման):

Էկոլոգիական մշակույթը, ինչպես և մշակույթի այլ տեսակները մարդու կողմից էկոլոգիական կրթության ոլորտում ստեղծած գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգի, ինչպես նաև էկոլոգիական գործունեության որոշակի փորձի հիման վրա նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Էկոլոգիական մշակույթը բնությունից օգտվելու ազգային-մշակութային սովորույթն ու արժեքն է:

Էկոլոգիական մշակույթի ձևավորման համար էկոլոգիական կրթությանը զուգահեռ պետք է կազմակերպվի սովորողի էկոլոգիական դաստիարակությունը: **Էկոլոգիական դաստիարակությունը** որոշակի պայմանների ստեղծումն է անձի կողմից էկոլոգիական մշակույթի յուրացման համար, որը ձևավորվել է հասարակության մեջ և պետք է փոխանցվի սերունդներին: 20-րդ դարի 80-ական թթ. Էկոլոգիա և էթիկա գիտությունների սահմանագծին ստեղծվեց մի նոր գիտություն, որը կոչվեց էկոլոգիական էթիկա: **Էկոլոգիական էթիկան** գիտություն է մարդու և բնության միջև բարոյական հարաբերությունների վերաբերյալ, որի հիմքում բնության ընկալումն է՝

իբրև համազոր գործընկերոջ, բոլոր կենդանի օրգանիզմների հավասար իրավունքների սահմանափակումը: Էկոլոգիական էթիկայի սերմանումը աշակերտի գիտակցության մեջ դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակներից է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանարցնելով ուսուցիչների պարտադիր ատեսատավորման ենթակա դասընթացի շրջանակներում իրականացված սույն հետազոտական աշխատանքի արդյունքերը, դրանք կարելի է ներկայացնել ներքոհիշյալ եզրակացությունների միջոցով.

1. Բնապահպանական հիմնախնդիրը վաղուց դարձել է մարդկությանը սպառնացող թիվ մեկ մարտահրավերը, որի բովանդակային և մասշտաբային սահմանները ոչ միայն չեն կրճատվում, այլ ընդհակառակն՝անընդհատ խորանում են։
2. Բնահպանական հիմնախնդրի լուծումը ենթադրում է համակարգային մոտեցում, որտեղ առանցքային բացառիկ դեր ու նշանակություն ունի մարդկանց իրազեկվածությունը։
3. Չնայած ոչ ֆորմալ կրթական ծրագրերի բազմազանությանը և սոցիալական տեղեկատվության հաղորդման ինտենսիվությանը, այնուամենայնիվ բնահպանական հիմնախնդրի վերաբերյալ մարդկանց իրազեկման ամենից կայուն միջոցը շարունակում է մնալ հանրակարթական դպրոցում համապատասխան կրթության և դաստիարակության ապահովումը։
4. ԲՆապահպանական կրությունն ու դաստիարակությունը ժամանակակից դպրոցում պետք է հանդես գա համակարգային ձևով, որի պարագայում առաջնային պլան է դուրս գալիս համապատասխան դասերի ինեներգացումը տարբեր դասընթացների շրջանակներում։
5. Պետք ձևակերպվի այն համոզմունքը, որ բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը ոչ միայն ներկայումս գոյություն ունեցող աշխարհին է ուղղված, այլ նաև՝ մոլորակի վաղվա բնականոն շարժընթացին՝ ապագա սերունդներին։
6. Ժմանակակից ուսումնասիրությունները փաստում են, որ բնապահպանական մշակույթը մարդու և բնության ներդաշնակ փոխազդեցության զարգացման

մակարդակ է, որը բնութագրվում է մարդկության կողմից էկոլոգիական հիմնախնդիրների առաջնահերթ լուծման գիտակցությամբ ու գիտական հիմնավորվածությամբ, ինչը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը, սերունդների համերաշխությանը՝ օգտագործելով բնության հնարավորությունները:

7. Հանրկարթական դպրոցի տարրական օղակում բնապահպանական կրթությունը և դաստիարակությունը երեխաների գիտակցության մեջ պետք է ապահովի աշխարհի միասնականության ամբողջականացումը, բնության մի մասնիկը լինելու իրողությունը: Ըստ այդմ, հնարավոր կլինի դեռ մանուկ հասակից ձևավորել հուզական, հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:
8. Հանրկարթական դպրոցի միջին օղակում պետք է լիարժեքանա բնապահպանական կրթության և դաստիարակության ընդհանուր պատկերը: Աշակերտները պետք է ձեռք բերեն էկոլոգիական մտածելակերպ և իրենց ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հնարավրություն:
9. Հանրկարթական դպրոցի ավագ օղակը պետք է ամբողջացնի մշակութային մարդու ներքնաշխարհը, որտեղ առանցքային դեր պետք է ունենա էկոլոգիական մշակույթը: Ըստ այդմ, պետք է ընդհանարացվի տարրական և միջին դպրոցում ստացած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնց վերջնարդյունքը՝ «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության գիտակցումն է:

Գրականության ցանկ

1. Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, «Արտագերս», Երևան 2006 թ, 334 էջ:
2. Սարուխանյան Ռ. , Հովսեփյան Ա. , Անձի էկոլոգիական կուլտուրան, Արևիկ հրատ. , Երևան 2005, 368 էջ,
3. Շահինյան Թ. , Մ. , Թահմրազյան Ն. , Կ. , Էկոլոգիա, Երևան, 2002
4. https://martamara86.wordpress.com/%D5%A7%D5%AF%D5%B8%D5%AC%D5%B8%D5%A3%D5%AB%D5%A1%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/
5. https://studref.com/359641/ekonomika/kontseptsii_razvitiya_tsivilizatsii_veke
6. https://nsportal.ru/shkola/kraevedenie/library/2019/09/26/ekologicheskie-problemy-v-shkolnom-kurse-geografii
7. https://cyberleninka.ru/article/n/formirovanie-ekologicheskoy-kultury-shkolnikov-na-urokah-geografii